Հավելված
ՀՀ կառավարության 2014 թ.
դեկտեմբերի 11-ի նիստի N 52
արձանագրային որոշման

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ հմ. 5504-AM
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ հմ. 5505-AM

Ֆինանսավորման համաձայնագիր

(Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ

միջև

Թվագրված 2014 թվականի օգոստոսի 6-ով

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ հմ. 5504-AM
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ հմ. 5505-AM

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Համաձայնագիր՝ թվագրված 2014 թվականի օգոստոսի 6-ով, կնքված ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Ստացող) և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ (Ընկերակցություն) միջև: Ստացողն ու Ընկերակցությունը սույնով համաձայնում են հետևյալի մասին:

ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի հավելվածում) կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

1.02. Եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, ապա սույն Համաձայնագրում մեծատառով գործվածված եզրույթներն ունեն Ընդհանուր պայմաններում կամ սույն Համաձայնագրի հավելվածում իրենց վերագրված նշանակությունը:

ՀՈԴՎԱԾ II. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

2.01. Ընկերակցությունը համաձայնում է սույն Համաձայնագրում սահմանված պայմաններով Ստացողին տրամադրել վեց միլիոն երկու հարյուր վացուն հազար Հատուկ Փոխառության իրավունքներին համարժեք Փոխառություն (6,260,000 ՀՓԻ), (այսուհետ՝ Վարկ և Ֆինանսավորում), որից՝ ա) երկու միլիոն չորս հարյուր վաթսուն հազար Հատուկ Փոխառության իրավունքներով գումար (ՀՓԻ 2,460,000) կհատկացվի սույն Համաձայնագրով սահմանված պայմաններին և կարգերին համապատասխան (Փոխառության Ա Մասնաբաժին կամ ՄՋԸ 5505-AM) և բ) երեք միլիոն ութ հարյուր հազար Հատուկ Փոխառության իրավունքներով գումար (ՀՓԻ 3,800,000) կհատկացվի սույն Համաձայնագրով սահմանված պայմաններին և կարգերին համապատասխան (Փոխառության Բ Մասնաբաժին կամ ՄՋԸ 5504-AM)՝ աջակցելու համար սույն Համաձայնագրի 1-ին Առդիրում ներկայացված ծրագրի ֆինանսավորմանը (Ծրագիր):

2.02. Ստացողը կարող է մասհանել Ֆինանսավորման միջոցները՝ սույն Համաձայնագրի 2-րդ Առդիրի IV բաժնի համաձայն:

2.03. Ստացողի կողմից Ֆինանսավորման չմասհանված մնացորդի համար պարտավճարի առավելագույն գումարը կազմում է տարեկան մեկ տոկոսի մեկ երկրորդը (1%-ի 1/2):

2.04. Մասհանված Փոխառության մնացորդի համար Ստացողի կողմից վճարման ենթակա Սպասարկման վճարը պետք է հավասար լինի մեկ տոկոսի երեք քառորդին (1%-ի 3/4)՝ տարեկան:

2.05. Ստացողի կողմից Մասհանված Փոխառության մնացորդի Ա Մասնաբաժնի (ՄՀԸ 55050-AM) համար տոկոսավճարի գումարը կազմում է տարեկան մեկ և մեկ քառորդ տոկոս (1.25%): Ստացողի կողմից Մասհանված Փոխառության մնացորդի Բ Մասնաբաժնի (ՄՀԸ 55040-AM) համար տոկոսավճարի գումարը կազմում է տարեկան մեկ ամբողջ չորս տասնորդական տոկոս (1.4%):

2.06. Վճարման ժամկետներն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը:

2.07. Վարկի մայր գումարը պետք է հետ վճարվի սույն Համաձայնագրի 3-րդ Առդիրի համաձայն:

2.08. Վճարման արժույթն է դոլարը:

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳԻՐ

3.01. Ստացողը հայտարարում է Ծրագրի նպատակների իրագործման հարցում իր հանձնառության մասին: Այդ նպատակով՝ Ստացողը պետք է իրականացնի Ծրագիրը գյուղատնտեսության նախարարության միջոցով (այսուհետ՝ գյուղատնտեսության նախարարություն)՝ Ընդհանուր պայմանների IV հոդվածի համաձայն:

3.02. Չսահմանափակելով սույն Համաձայնագրի 3.01-ին բաժնի դրույթները, և բացառությամբ այն դեպքերի, երբ Ստացողն ու Ընկերակցությունը կհամաձայնեն այլ բանի մասին, Ստացողը պետք է ապահովի, որ Ծրագիրն իրականացվի սույն Համաձայնագրի 2-րդ Առդիրի դրույթների համաձայն:

ՀՈԴՎԱԾ IV. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

4.01. Ուժի մեջ մտնելու Լրացուցիչ պայմաններն են՝

ա) Վարկային համաձայնագիրը կատարվել և ներկայացվել է, և կատարվել են դրա ուժի մեջ մտնելու կամ դրա շրջանակներում մասհանումներ կատարելու Ստացողի իրավունքի բոլոր նախապայմանները՝ ՝ բացառությամբ միայն Ֆինանսավորման համաձայնագրի ուժի մեջ մտնելը, և
բ) Ընկերակցության համար ընդունելի Ծրագրի գործառնական ձեռնարկը (ներառյալ Ծրագրի I.ա և II.ա մասերի՝ Համայնքային հիմնադրամի ֆինանսավորման և Նպատակային ենթածրագրերի դրամաշնորհների հավելվածները) հաստատվել է Ընկերակցության կողմից և ընդունվել Ստացողի կողմից:

4.02. Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը սույն Համաձայնագրի ամսաթվին հաջորդող հարյուրութսուներորդ (180) օրն է:

4.03. Ընդհանուր պայմանների 8.05-րդ բաժնի «բ» կետի նպատակների համար Ստացողի՝ սույն Համաձայնագրով նախատեսված պարտավորությունների (բացառությամբ վճարային պարտավորություններին վերաբերող պարտավորությունների) ավարտի օրը սույն Համաձայնագրի ամսաթվին հաջորդող քսան տարին է:

ՀՈԴՎԱԾ V. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ. ՀԱՍՑԵՆԵՐ

5.01. Ստացողի ներկայացուցիչը վերջինիս ֆինանսների նախարարն է:

5.02. Ստացողի հասցեն է՝

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարություն
Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան, 0010
Մելիք-Ադամյան 1

Ֆաքս՝

374 60700358

5.03. Ընկերակցության հասցեն է՝

International Development Association
1818 H Street, N.W.
Washington, D.C. 20433
United States of America

Հեռատիպ՝	Տելեքս՝	Ֆաքս՝
INDEVAS Washington, D.C.	248423(MCI)	1-202-477-6391

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է Երևանում (Հայաստան) վերևում առաջինը նշված ամսաթվի և տարվա դրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____

Լիազոր ներկայացուցիչ

Անուն՝ Գագիկ Խաչատրյան
Պաշտոն՝ Ֆինանսների նախարար

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

_____

Լիազոր ներկայացուցիչ

Անուն ՝ Ժան Միշել Հափի
Պաշտոն՝ Երևանյան գրասենյակի ղեկավար

Առդիր 1

Ծրագրի նկարագրությունը

Ծրագրի նպատակներն են՝ i) բարելավել արոտավայրերի և անասնապահական համակարգերի արտադրողականությունն ու կենսունակությունը նպատակային համայնքներում և ii) ավելացնել ընտրված անասնապահական և բարձրաժեք ագրոպարենային արժեշղթաների արտադրանքի շուկայահանումը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

<u>Մաս 1. Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ</u>

Արոտավայրեր օգտագործողների կոոպերատիվների (այսուհետ՝ ԱՕԿ) կարողությունների, գիտելիքների և նեգրավվածության ավելացման գործողությունների ծրագրի իրականացում՝ ներառյալ.

ա) Համայնքների արոտավայրերի կառավարման և

բ) ԱԿԱԶԾ-ներում սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունների իրագործման համար Հայմայնքային հիմնադրամի ֆինանսավորման հատկացումը,

գ) կանանց և գյուղական երիտասարդության նպատակային վերապատրաստման և մոբիլիզացման գործողությունների իրականացումը՝ խթանելով. i) անասնապահական և արոտավայրերի կառավարման մասին որոշումների կայացման գործընթացում մասնակցությունը և ii) սննդամթերքի արտադրության զարգացման գործընթացում կանանց և երիտասարդների մասնակցությունը,

դ) ԾԻԳ-ի բաղադրիչի համակարգողներին և մարզային համակարգողներին՝ սույն Ծրագրի I Մասի շրջանակներում իրականացվող աշխատանքների համակարգման, վերահսկման, կապի պահպանման և իրազեկման գծով օժանդակության տրամադրում:

<u>Մաս II. Արժեշղթայի զարգացում</u>

ա) Նպատակային ենթածրագրային դրամաշնորհների տրամադրում և հատուկ վերապատրաստման կազմակերպում՝ ենթածրագրերի աշխատանքային ծրագրերում ներկայացված ներքին պահանջարկի և արտաքին շուկայահանման կարիքների բավարարման, կերարտադրության հիման վրա կաթի և մսի, մշակված մրգի և բանջարեղենի արժեշղթաների բարելավման համար:

բ) Սննդամթերք արտադրողների շրջանում հարցման անցկացում մասնավորապես ՍԱՕ-ների տվյալների շտեմարանի ստեղծման համար, որտեղ տվյալներ կներառվեն ԱՕԿ-ների չափերի, արտադրանքի տեսականու, հավաստագրումների, գործարար կապերի և սննդամթերքի անվտանգության միջոցառումների մասին:

գ) Աջակցություն Ստացողին՝ ֆինանսավորելով ՍԱՕ-ների համար անցկացվող թեմատիկ սեմինարները, հրապարակումները, վերապատրաստումները, տեղեկատվական հանդիպումները և փոքր քարտուղարության կողմից Նպատակային ենթածրագրերի դրամաշնորհների կառավարման գծով

աշխատանքը, մասնավորապես՝ տեխնիկական առաջարկների ուսումնասիրումը, հաստատող հանձնաժողովին (որի կազմում ընդգրկված են ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչներն ու տեխնիկական փորձագետները) հայտերի ներկայացումը, ենթածրագրերի իրականացման ընթացքի մշտադիտարկումը և արդյունքների գնահատումը:

Մաս III. Պետական հատվածի կառույցների ուժեղացում

Պետական կառույցների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ Ծրագրի I և II մասերի համաձայն օժանդակվող՝ ընտրված արժեշղթաներում գործարարության զարգացման և շուկայահանման աջակցության նպատակով: Այդ միջոցառումները նախատեսում են.

ա) Անասնաբուժական ծառայությունների ֆինանսավորում, այդ թվում՝ i) շուրջ քսան (20) համայնքային անասնաբույժների մոբիլիզացում, վերապատրաստում և տեխնիկական սարքավորումներով վերազինում և ii) չորս շրջանային անասնաբուժական ծառայությունների կենտրոնների կառուցում, որոնք կշահագործվեն համայնքային անասնաբույժների կողմից:

բ) Սննդամթերքի անվտանգության գծով միջոցառումների ֆինանսավորում՝ i) Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (ՍԱՊԾ) ուժեղացման ու լաբորատոր աջակցության, ii) Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի կողմից իրականացվող պատվաստումների ծրագրի համար լրացուցիչ սարքավորումների մատակարարման համար:

գ) Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի՝ Սերմերի և տնկիների զարգացման ծրագրի, այդ թվում՝ շինարարական աշխատանքների և սերմերի ու տնկիների արտադրության բարելավման համար անհրաժեշտ սարքավորումների մատակարարման ֆինանսավորում:

դ) Պատշաճ գյուղատնտեսական գործելակերպի (ՊԳԳ) կիրառման գծով միջոցառումների ֆինանսավորում, մասնավորապես՝ i) ՊԳԳ դրույթների վերաբերյալ աշխատաժողով խորհրդականների և այլ շահակիցների հետ, ii) կարիքների գնահատման և առաջնահերթությունների սահմանման նպատակով Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի (ԳԱՀԿ) կողմից անցկացվող՝ ֆերմերների հարցումներ, iii) գյուղատնտեսական գործելակերպի մասին երեք ընտրված ուղեցույցների կազմում և հրապարակում, iv) ուղեցույցների բովանդակության շուրջ խորհրդականների վերապատրաստում, v) ուղեցույցների տրամադրում ֆերմերներին և vi) հողի վերլուծությունների բարելավման համար աջակցություն Ագրոքիմիական ծառայություն ՊՈԱԿ-ի կարողությունների զարգացմանը:

ե) ԾԻԳ-ի իրավասու համակարգողին աջակցության տրամադրում Ծրագրի սույն՝ III մասի ներքո գործողությունների համակարգման, վերահսկման, հաղորդակցման և կապի ոլորտներում:

Մաս IV. Ծրագրի համակարգումը և կառավարումը

Աջակցություն ԾԻԳ-ին Ծրագրի համակարգման, վերահսկման, ֆինանսական կառավարման, գնումների, հաղորդակցման և կապերի, բնապահպանական և սոցիալական երաշխիքների գործիքների հսկման, մշտադիտարկման և

գնահատման հարցերում, այդ թվում՝ տեխնիկական օժանդակության, վերապատրաստման, տրանսպորտային և ստուգայցերի ծախսերի, ազդեցությունների գնատահատման, Ծրագրի գնահատումների ծախսերի և աուդիտի գծով:

Առդիր 2

Ծրագրի իրագործում

Բաժին I. **Իրականացման միջոցառումներ**

Ա. Ինստիտուցիոնալ միջոցառումներ

1. Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ

Ծրագրի պատշաճ և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով Ստացողը Ծրագրի իրականացման ողջ ընթացքում Գյուղատնտեսության նախարարության կազմում պետք է պահի Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ (ԾԻԳ)՝ Ընկերակցության համար ընդունելի լիազորություններով, աշխատակազմով, այլ ռեսուրսներով և տեխնիկական առաջադրանքով: Այդ նպատակով ԾԻԳ-ը պետք է. ա) իր կազմում ընդգրկի բավարար թվով որակյալ և բանիմաց աշխատակիցների, ներառյալ տեխնի-կական, վարչական և օժանդակ հիմնական աշխատակազմը, բ) ապահովի Ծրագրի ամենօրյա համակարգումն ու իրականացումը, այդ թվում՝ i) Ծրագրի II-րդ մասին համապատասխան՝ ստեղծի և պահի Նպատակային ենթածրագրային դրամաշնորհների մշակման համար պատասխանատու փոքր քարտուղարություն, ii) Ընկերակցության համար ընդունելի ձևով իրականացնի Ծրագրի ֆինանսական կառավարման և գնման աշխատանքները, iii) ապահովի համապատասխանությունը Ծրագրի երաշխիքային գործիքներին, iv) անցկացնի Ծրագրի մշտադիտարկումն ու գնահատումը և կազմի Ծրագրի կատարողական հաշվետվությունները, մշտադիտարկման ու գնահատման հաշվետվությունները և v) աշխատանքի ընդունի և Ծրագրի իրականացման ողջ ընթացքում կամ Ընկերակցության հետ համաձայնեցված այլ ժամկետի ընթացքում իր կազմում ընդգրկի բնապահպանական/սոցիալական մասնագետի, որի որակավորումը, փորձը և տեխնիկական առաջադրանքը ընդունելի կլինեն Ընկերակցության համար:

2. Ծրագրի գործառնական ձեռնարկը

2.1. Ստացողը պետք է կազմի և Ընկերակցությանը ներկայացնի, Ընկերակ-ցության համար ընդունելի տեխնիկական առաջադրանքին համապատասխան, Ծրագրի իրականացման ձեռնարկ (Ծրագրի գործառնական ձեռնարկ), որով կսահմանվեն. ա) Ծրագրի ընդհանուր գործողությունների գծով իրականացման ընթացակարգերը և նախապատրաստությունները, այդ թվում՝ բողոքների քննության մեխանիզմները, ինչպես նաև Համայնքների հիմնադրամի ֆինանսավորման և Թիրախային ենթածրագրերի դրամաշնորհների գծով պահանջները, չափանիշները և որոշումների կայացման գործընթացները, և բ) Ծրագրի վարչական, ֆինանսական կառավարման, գնումների, հաշվապահական հաշվառման, երաշխիքների, մշտադիտարկման և գնահատման ընթացակարգերը և նախապատրաստությունները: Ծրագրի գործառնական ձեռնարկը պետք է պարունակի Համայնքների հիմնադրամի ֆինանսավորման և Նպատակային ենթածրագրերի դրամաշնորհներին վերաբերող հատուկ հավելվածներ, որոնք պետք է կազմեն այդ ձեռնարկի անբաժանելի մասը: Ծրագրի գործառնական ձեռնարկը պետք է հաստատվի Ստացողի կողմից՝ Ընկերակցության կողմից հաստատվելուց հետո:

2.2. Ծրագրի Ι.բ և ΙΙ.ա մասերի համաձայն՝ Համայնքների հիմնադրամի դրամաշնորհներին և Նպատակային ենթածրագրերի ֆինանսավորմանը վերաբերող գործողությունների իրականացման նպատակով Ստացողը պետք է Ընկերակցության հաստատմանը ներկայացնի մանրամասն առաջարկ Ծրագրի գործառնական հավելվածների, այդ թվում՝ համապատասխան գործողությունների նախագծի և իրականացման վերաբերյալ: Ընկերակցության կողմից մանրամասն առաջարկը հաստատվելուց հետո Ստացողը պետք է, Ընկերակցության համար ընդունելի տեխնիկական առաջադրանքին համապատասխան, կազմի Ծրագրի գործառնական հավելվածները Համայնքների հիմնադրամի ֆինանսավորման և Նպատակային ենթածրագրերի դրամաշնորհների համար, որտեղ մանրամասն կներկայացվեն. Ա) տեխնիկական, Բ) վարչական, Գ) գնումների, Դ) բնապահպանական և սոցիալական, Ե) ֆինանսական ու հաշվապահական և Զ) մշտադիտարկման և գնահատման ընթացակարգերն ու նախապատրաստությունները՝ ըստ կիրառելիության: Այդ ձեռնարկները պետք է նաև ներկայացնեն. i) իրականացման նախապատրաստությունների և իրավական համաձայնագրերի նկարագրությունը, ըստ կիրառելիության, միջոցառումների ընտրության և ֆինանսավորման կանոնները, մեթոդները, ուղեցույցները, պահանջները, իրավասության չափանիշները, որոշումների կայացման գործընթացները, ինչպես նաև բողոքների քննության մեխանիզմները, ii) դրամական հոսքերը և դրանց կառավարումը, և iii) համապատասխան ֆինանսավորման պայմանների համապատասխանության ստուգման մեխանիզմները:

2.3. Ստացողը պետք է Ծրագիրն իրականացնի ըստ Ծրագրի գործառնական ձեռնարկի և չպետք է հանձնարարի, փոփոխի, անվավեր ճանաչի կամ հրաժարվի կամ թույլ տա հանձնարարել, փոփոխել, անվավեր ճանաչել կամ հրաժարվել վերոնշյալ ձեռնարկից կամ նրա որևէ դրույթից՝ առանց Ընկերակցության նախնական գրավոր համաձայնության:

2.4. Ծրագրի գործառնական ձեռնարկի և ֆինանսական համաձայնագրի դրույթների միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակայությունը տրվում է Ֆինանսական համաձայնագրի դրույթներին:

2.5. Ծրագրի իրականացման ընթացքում, Ծրագրի փոխադարձ կապի ապահովման և բողոքների լուծման նպատակով, Ստացողը պետք է մշակի և իրագործի հանրությանը հասանելի և Ընկերակցության համար ընդունելի՝ բողոքների քննության մեխանիզմ:

Բ. Կոռուպցիայի դեմ պայքար

Ստացողը պետք է ապահովի Ծրագրի իրականացման համապատաս-խանությունը Հակակոռուպցիոն ուղեցույցների դրույթների համաձայն:

Գ. Համայնքային հիմնադրամի ենթածրագրեր/Նպատակային ենթածրագրեր

1. Ստացողը պետք է. ա) գնահատի, ուսումնասիրի, հաստատի և հսկողություն սահմանի Համայնքային հիմնադրամի ենթածրագրերի և Նպատակային ենթածրագրերի նկատմամբ և բ) Ι.գ Բաժնի իրավասության չափանիշներին և

ընթացակարգերին համապատասխան՝ ԱԿԱԶԾ-ների իրականացման համար հատկացնի Համայնքային հիմնադրամի ֆինանսավորում՝ ընտրված Համայնքային հիմնադրամի շահառուներին, և Նպատակային ենթածրագրերի դրամաշնորհներ՝ Ընտրված նպատակային ենթածրագրերի շահառուներին:

2. Ընկերակցության հետ այլ բանի մասին գրավոր պայմանավորվածություն չլինելու դեպքում առաջարկվող Համայնքային հիմնադրամի ենթածրագիր կամ Նպատակային որևէ ենթածրագիր չի կարող ընդունելի համարվել ֆինանսվորման համար՝ ըստ Ծրագրի Ի.բ մասի և/կամ II.ա մասի, բացառությամբ այն դեպքերի, երբ Ստացողը որոշում է, որ Ենթածրագիրը բավարարում է ստորև թվարկված իրավասության չափանիշները և այնպիսի լրացուցիչ չափանիշներ, որոնք կարող են սահմանվել Ծրագրի գործառնական ձեռնարկում.

ա) առաջարկվող Համայնքային հիմնադրամի ենթածրագիրը/Նպատակային ենթածրագիրը տնտեսապես, ֆինանսապես և տեխնիկապես հիմնավորված է, շրջակա միջավայրի համար վտանգ չի ներկայացնում և պետք է իրականացվի իրավասու Շահառուների կողմից՝ Ստացողի տարածքի նախապես ընտրված տեղանքներում,

բ) առաջարկվող Համայնքային հիմնադրամի ենթածրագիրը և Նպատակային ենթածրագիրը բաղկացած են, համապատասխանաբար, Ծրագրի Ի.բ և/կամ II.ա մասերով նախատեսված և Ծրագրի գործառնական ձեռնարկում ավելի մանրամասն ներկայացված հատուկ զարգացման գործողություններից, և այն համապատասխանում է Ստացողի բոլոր կիրառելի օրենքներին և կարգերին,

գ) առաջարկվող Համայնքային հիմնադրամի ենթածրագիրը և Նպատակային ենթածրագիրը չեն նախատեսում հողի ձեռքբերում (մշտական կամ ժամանակավոր) կամ ֆիզիկական վերաբնակեցում, համապատասխանում են Գործառնական ձեռնարկում սահմանված իրավասության չափանիշներին, երաշխիքների շրջանակներին և այլ՝ անհրաժեշտ երաշխիքային փաստաթղթերի պահանջներին,

դ) այն դեպքում, երբ Գործառնական ձեռնարկի համաձայն անցկացված՝ Համայնքային հիմնադրամի ենթածրագրի և Նպատակային ենթածրագրի բնապահպանական դիտարկման արդյունքներով պահանջվում է բնապահպանական կառավարման ծրագիր (այսուհետ՝ ԲԿԾ) կամ Վերաբնակեցման միջոցառումների ծրագիր (այսուհետ՝ ՎՄԾ), ապա նման ԲԿԾ-ն կամ ՎՄԾ-ն պետք է կազմվեն Բնապահպանական կառավարման շրջանակային փաստաթղթին (այսուհետ՝ ԲԿՇՓ) և/կամ Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթղթին (այսուհետ՝ ՎՔՇՓ) համապատասխան և պետք է հաստատվեն Ընկերակցության կողմից:

3. Ծրագրի Ի.բ մասով նախատեսված գործողությունների իրականացման համար Համայնքային հիմնադրամում կառանձնացվեն միջոցներ Վարկի հասույթից՝ ֆինանսավորելու համար հաստատված ԱԿԱԶԾ-ներում ներառված գործողությունները, որոնք կիրականացվեն անմիջապես ԾԻԳ-ի կողմից՝ ԱՕԿ-ների և համայնքների մասնակցությամբ:

4. Ծրագրի II.ա մասով նախատեսված Ենթածրագրերի ֆինանսավորման համար Ստացողը պետք է Վարկի հասույթից հատկացնի Նպատակային Ենթածրագի դրամաշնորհներ Վարկային ծրագրի ներքո ընտրված Շահառուներին՝ Ընկերակցության կողմից հաստատված և Ծրագրի գործառնական ձեռնարկում նշված պայմաններով, որոնք կներառեն այն պայմանները, որոնց միջոցով Ստացողին կտրվեն բավարար իրավունքներ իր և Ընկերակցության շահերը պաշտպանելու համար, այդ թվում՝ i) կասեցնել կամ դադարեցնել Դրամաշնորհի հասույթն օգտագործելու Շահառուի իրավունքը կամ ii) Շահառուի կողմից Դրամաշնորհային համաձայնագրով հանձն առնված որևէ պարտավորության չկատարման դեպքում ամբողջությամբ կամ մասնակիորեն հետ ստանալ մասհանված Դրամաշնորհի գումարը:

5. Ստացողը պետք է Շահառուից պահանջի.

(i) պատշաճ ջանասիրությամբ և արդյունավետությամբ իրականացնել Համայնքային հիմնադրամի ենթածրագիրը կամ Նպատակային ենթածրագիրը, ըստ կիրառելիության, Ընկերակցության համար ընդունելի՝ պատշաճ տեխնիկական, տնտեսական, ֆինանսական, կառավարչական, բնապահպանական և սոցիալական չափորոշիչներին և գործելակերպին համապատասխան, պահպանելով նաև, Ստացողից բացի, ֆինանսական հասույթն այլ ստացողների համար կիրառելի Հակակոռուպցիոն ուղեցույցները,

(ii) կիրառելիության դեպքում իրականացնել ԲԿԾ-ները և ՎՄԾ-ները,

(iii) հնարավորինս արագ տարամադրել, ըստ պահանջի, Ենթածրագրերի իրականացման համար անհրաժեշտ միջոցները,

(iv) կատարել Դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները՝ սույն Համաձայնագրի դրույթների համաձայն (Նպատակային ենթածրագրի շահառուի դեպքում),

(v) պահպանել այն քաղաքականությունն ու ընթացակարգերը, որոնք թույլ կտան, Ընկերակցության համար ընդունելի ցուցանիշներին համապատասխան, մշտադիտարկել և գնահատել Համայնքային հիմնադրամի ենթածրագրի կամ Նպատակային ենթածրագրի առաջընթացը և նրա նպատակներին հասնելը, ըստ կիրառելիության,

(vi) Ա) պահել Ընկերակցության համար ընդունելի ֆինանսական կառավարման համակարգ և կազմել ֆինանսական հաշվետվություններ՝ հետևողականորեն կիրառվող հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան, որը թույլ կտա արտացոլել Համայնքային հիմնադրամի ենթածրագրին կամ Նպատակային ենթածրագրին վերաբերող գործառնությունները, միջոցները և ծախսերը, և Բ) Ընկերակցության կամ Ստացողի պահանջով կազմակերպել ֆինանսական հաշվետվությունների աուդիտ Ընկերակցության համար ընդունելի անկախ աուդիտորի

կողմից, Ընկերակցության համար ընդունելի՝ հետևողականորեն կիրառվող հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան, և աուդիտ անցած հաշվետվությունները հնարավորինս արագ ներկայացնել Ստացողին և Ընկերակցությանը,

(vii) հնարավորություն ընձեռել Ստացողին և Ընկերակցությանը՝ ստուգելու Համայնքային հիմնադրամի ենթածրագիրը կամ Նպատակային ենթածրագիրը, գործառնությունները և դրանց առնչվող ցանկացած գրառում և փաստաթուղթ, և

(viii) կազմել և Ստացողին ու Ընկերակցությանը տրամադրել վերոնշյալի վերաբերյալ ամբողջ այն տեղեկատվությունը, որը կարող է ողջամտորեն պահանջվել Ստացողի կամ Ընկերակցության կողմից:

6. Ստացողը յուրաքանչյուր Դրամաշնորհային համաձայնագրի ներքո իր իրավունքները պետք է իրականացնի այնպես, որ պաշտպանի Ստացողի և Ընկերակցության շահերը և հասնի ֆինանսավորման նպատակներին: Բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերակցությունը համաձայնություն կտա այլ բանի վերաբերյալ, Ստացողը չպետք է հանձնարարի, փոփոխի, անվավեր ճանաչի կամ հրաժարվի որևէ Դրամաշնորհի Համաձայնագրից կամ նրա դրույթներից:

Դ. Երաշխիքները

1. Ստացողը պետք է իրականացնի Ծրագիրը Երաշիքային շրջանակների և բոլոր երաշխիքային փաստաթղթերի համաձայն: Այդ նպատակով Ստացողը պետք է իրականացնի հետևյալ միջոցառումները.

ա) Եթե Ծրագրով նախատեսված որևէ գործողություն, ԲՍԿՇ-ի համաձայն, պահանջում է ԲԿԾ-ի իրականացում, որևէ այդպիսի գործողություն չի կարող իրականացվել այնքան ժամանակ քանի դեռ.

i) նման գործողության համար ԲԿԾ-ն. Ա) չի կազմվել ԲՍԿՇ-ին համապատասխան և Տարեկան աշխատանքային ծրագրի կազմում չի ներկայացվել Ընկերակցությանը, Բ) չի հրատարակվել երկրում, ինչպես պահանջվում է ԲՍԿՇ-ով, և Գ) չի հաստատվել Ընկերակցության կողմից և չի հրապարակվել հանրության համար, և

բ) Եթե Ծրագրով նախատեսված որևէ գործողություն, ՎՔՇ-ի համաձայն, պահանջում է ՎՄԾ-ի իրականացում, որևէ այդպիսի գործողություն չի կարող իրականացվել այնքան ժամանակ քանի դեռ.

i) նման գործողության համար ՎՄԾ-ն. Ա) չի կազմվել ՎՔՇ-ին համապատասխան և չի ներկայացվել Ընկերակցությանը, Բ) չի հրատարակվել, ինչպես պահանջվում է ՎՔՇ-ով, և Գ) չի հաստատվել Ընկերակցության կողմից, և

ii) Ա) մինչև նման գործողությունների մեկնարկը չեն իրականացվել վերոնշյալ ՎՄԾ-ի ներքո պահանջվող բոլոր միջոցառումները, այդ թվում՝ առանց վերոնշյալի սահմանափակման՝ չեն հատկացվել վերաբնակեցման փոխհատուցման համար միջոցները և եթե դա պահանջվում է ՎՄԾ-ի ներքո, Բ) Ընկերակցության համար ընդունելի ձևաչափով և բովանդակությամբ հաշվետվությունը նշված ՎՄԾ-ի պահանջներին համապատասխանության աստիճանի մասին չի կազմվել և չի ներկայացվել Ընկերակցությանը, և Գ) Ընկերակցությունը չի հաստատել, որ նշված գործողությունները կարող են մեկնարկել:

2. Առանց սույն Համաձայնագրի ներքո հաշվետվողականության գծով իր պարտավորությունների սահմանափակման՝ Ստացողը պետք է կանոնավոր կերպով հավաքի, կազմի և Ընկերակցության պահանջով ներկայացնի Ընկերակցության համար ընդունելի ձևաչափով և բովանդակությամբ հաշվետվություններ Երաշխիքային գործիքներին համապատսխանության կարգավիճակի մասին, այդ թվում՝

ա) նման Երաշիքային գործիքների կիրառմանն ուղղված միջոցառումները,

բ) այն պայմանները, առկայության դեպքում, որոնք խոչընդոտում են կամ կարող են խոչընդոտել Երաշիքային գործիքների անխափան իրականացումը, և

գ) նման պայմաններից բխող վնասի վերացման համար ձեռնարկված կամ անհրաժեշտ քայլերը:

3. Ստացողը պետք է Ընկերակցությանն ընձեռի բավարար հնարավորություն սույն Համաձայնագրի Գ մասի 2-րդ կետի համաձայն կազմված հաշվետվությունների ուսումնասիրման համար և այդ նպատակով անհրաժեշտ ջանասիրությամբ իրականացնի կամ ապահովի Ընկերակցության հետ համաձայնեցված՝ վնասի վերացմանն ուղղված բոլոր միջոցառումների իրականացումը՝ ապահովելով Երաշիքային գործիքներին համապատասխան Ծրագրի պատշաճ իրականացումը:

<u>Բաժին II.</u> <u>Ծրագրի մշտադիտարկումը, հաշվետվողականությունը և գնահատումը</u>

Ա. Ծրագրի հաշվետվությունները

1. Ստացողը պետք է անցկացնի Ծրագրի առաջընթացի մշտադիտարկում և գնահատում, Ընդհանուր պայմանների 4.08-րդ բաժնի համաձայն, և Ընկերակցության համար ընդունելի ցուցանիշների հիման վրա կազմի Ծրագրի հաշվետվություններ: Յուրաքանչյուր Ծրագրի հաշվետվություն պետք է ներառի մեկ օրացուցային կիսամյակ ժամանակահատված և Ընկերակցությանը ներկայացվի այդ հաշվետվության ժամկետի ավարտից ոչ ուշ, քան մեկ ամիս հետո:

2. Ընդհանուր պայմանների 4.08-րդ բաժնի «գ» կետի նպատակների համար Ծրագրի իրականացման մասին հաշվետվությունը և այդ բաժնի համաձայն պահանջվող համապատասխան ծրագիրը պետք է ներկայացվեն Ընկերակցությանը Ավարտի ժամկետից ոչ ուշ, քան չորս ամիս առաջ:

Բ. Ֆինանսական կառավարում, ֆինանսական հաշվետվություններ և աուդիտ

1. Ստացողը պետք է պահի կամ ապահովի ֆինանսական կառավարման համակարգի պահումը Ընդհանուր պայմանների 4.09-րդ բաժնի դրույթների համաձայն:

2. Չսահմանափակվելով սույն բաժնի Ա Մասի դրույթներով՝ Ստացողը պետք է ապահովի աուդիտորական ստուգում չանցած՝ Ծրագրի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և դրանք ներկայացնի Ընկերակցությանը ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային կիսամյակից հետո՝ քառասունհինգ (45) օրվա ընթացքում, Համաշխարհային բանկի համար ընդունելի ձևաչափով և բովանդակությամբ:

3. Ստացողը պետք է ապահովի, Ընդհանուր պայմանների 4.09-րդ բաժնի *բ* կետի դրույթներին համապատասխան, ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ստուգումը: Ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ստուգումը ներառում է Ստացողի մեկ ֆիսկալ տարվա ժամանակահատված: Նշված ժամանակահատվածի համար աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները Ընկերակցություն են ներայացվում ոչ ուշ, քան աուդիտորական ստուգման ավարտից վեց ամիս հետո:

<u>Բաժին III.</u> <u>Գնումներ</u>

Ա. Ընդհանուր

1. **Ապրանքները, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները:** Ծրագրի համար պահանջվող և Ֆինանսավորման հասույթից ֆինանսավորվող բոլոր ապրանքները, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները պետք է գնվեն Գնումների ուղեցույցերի I բաժնում սահմանված կամ նշված պահանջների և սույն բաժնի պահանջների համաձայն:

2. **Խորհրդատվական ծառայությունները:** Ծրագրի համար պահանջվող և Ծրագրի հասույթից ֆինանսավորվող բոլոր խորհրդատվական ծառայությունները պետք է գնվեն Խորհրդատուների ուղեցույցերի I և IV բաժիններում սահմանված կամ նշված պահանջների և սույն Բաժնի պահանջների համաձայն:

3. **Սահմանումները:** Սույն բաժնում հետագա մասերում Գնումների առանձին մեթոդների կամ Ընկերակցության կողմից առանձին պայմանագրերի ուսումնասիրման մեթոդների նկարագրման համար մեծատառով գործածվող եզրույթները վերաբերում են Գնումների ուղեցույցների II և III բաժիններում և Խորհրդատուների ուղեցույցերի II, III, IV և V բաժիններում համապատասխան մեթոդներին՝ ըստ կիրառելիության:

Բ. Ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման հատուկ մեթոդները

1. **Միջազգային մրցակցային գնահարցում:** Եթե այլ բան նախատեսված չէ ներքոհիշյալ 2-րդ կետում, ապրանքները, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները պետք է գնվեն Միջազգային մրցակցային գնահարցման հիման վրա շնորհված պայմանագրերի համաձայն:

2. **Ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման այլ մեթոդները:** Գնման պլանում նշված պայմանագրերի համաձայն՝ ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման համար, Միջազգային մրցակցային գնահարցման մեթոդից բացի, պետք է կիրառվեն հետևյալ մեթոդները:

Գնման մեթոդ
ա) Ստացողի Ազգային մցակցային գնահարցումը կարող է կիրառվել Ծրագրի ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման համար՝ հետևյալ պայմաններին համապատասխանելու դեպքում. i) պետական գնումների մրցույթին չեն կարող մասնակցել այն կազմակերպությունները, որոնց բաժնետիրական կապիտալի մեծ մասը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը, բացառությամբ այն դեպքի, երբ կազմակերպությունն իրավական և ֆինանսական տեսակետից անկախ է, նրա գործունեությունը կարգավորվում է առևտրային օրենքով, ii) հետորակավորման չափանիշները տարածվում են միայն մրցույթի մասնակիցների հետպայմանագրային գործունեության, ֆինանսական, կառավարչական և տեխնիկական կարողությունների վրա, iii) համատեղ ձեռնարկությունների մասնակիցները համատեղ և համաչափ պարտավորորություն են կրում իրենց պարտավորությունների դիմաց, iv) պայմանագրերի հաշվարկված գները չեն հրապարակվում, v) հայտերի բացման ժամանակ հայտերը չեն կարող մերժվել, vi) հայտը չի կարող մերժվել միայն հաշվարված գինը գերազանցելու պատճառով: Մրցույթը կարող է կասեցվել և նոր հայտահրավեր կազմակերպվել միայն Գնումների ուղեցույցերի 2.61-2.64 կետերի պայմանները բավարարած լինելու դեպքում, vii) հայտերի գնահատման բոլոր չափանիշները պետք է ներկայացվեն դրամական արտահայտությամբ կամ որպես բավարարված/չբավարարված չափանիշներ, և viii) իրականացման ընթացքում պայմանագրի շրջանակում/պայմաններում տեղի ունեցած ցանկացած փոփոխություն ենթակա է Ընկերակցության նախնական հաստատմանը:
բ) Շոփինգ
գ) Շրջանակային համաձայնագիր
դ) Ուղղակի պայմանագիր
ե) Համայնքի մասնակցություն գնմանը

Գ.Խորհրդատուների ծառայությունների գնման հատուկ մեթոդներ

1. **Որակի և գնի հիման վրա ընտրության մեթոդ:** Եթե այլ բան սահմանված չէ ներքոնշյալ 2-րդ կետում, կնքված պայմանագրերի ներքո խորհրդատվական ծառայությունները պետք է գնվեն որակի և գնի հիման վրա ընտրության մեթոդով:

2. **Խորհրդատուների ծառայությունների գնման այլ մեթոդները**: Գնման պլանում նշված պայմանագրերի համաձայն՝ խորհրդատվական ծառայությունների գնման համար, Որակի և գնի հիման վրա ընտրության մեթոդից բացի, կարող են կիրառվել հետևյալ մեթոդները.

Ընտրության մեթոդ	
ա)	Որակի հիման վրա ընտրություն
բ)	Ֆիքսված բյուջեով ընտրություն
գ)	Նվազագույն գնի հիման վրա ընտրություն
դ)	Խորհրդատուների որակավորման հիման վրա ընտրություն
ե)	Մեկ աղբյուրի հիման վրա ընտրություն
զ)	Անհատական խորհրդատուների ընտրության համար Խորհրդա-տուների ուղեցույցների 5.1-5.6-րդ կետերում սահմանված մեթոդներ

Դ. Ընկերակցության կողմից գնման որոշումների ուսումնասիրությունը

Գնումների պլանում ներկայացվում են այն պայմանագրերը, որոնք ենթակա են Ընկերակցության Նախնական հաստատմանը: Բոլոր մյուս պայմանագրերը ենթակա են Ընկերակցության հետհաստատմանը:

Բաժին IV.Ֆինանսավորման հասույթի մասհանումը

Ա. Ընդհանուր

1. Ստացողը կարող է Ֆինանսավորման միջոցներից մասհանումներ կատարել՝ համաձայն Ընդհանուր պայմանների II հոդվածի, սույն բաժնի դրույթների և բոլոր լրացուցիչ հրահանգների, որոնց մասին Ընկերակցությունը գրավոր կծանուցի Ստացողին (այդ թվում՝ 2006 թ. մայիսի 6-ի՝ Համաշխարհային բանկի Ծրագրերի համար ուղեցույցների, ըստ Ընկերակցության կողմից պարբերաբար վերանայվող կիրառելի տարբերակի և ըստ այդ հրահանգների համաձայն՝ սույն Համաձայնագրին համապատասխան)՝ սույն կետի 2-րդ ենթակետի աղյուսակում սահմանված Թույլատրելի ծախսերը ֆինանսավորելու համար:

2. Ստորև բերված աղյուսակում նշված են Թույլատրելի ծախսերի այն կատեգորիաները, որոնք կարող են ֆինանսավորվել Ֆինանսավորման հասույթից (Կատեգորիա), յուրաքանչյուր կատեգորիայի համար հատկացված Ֆինանսավորման գումարը և յուրաքանչյուր Կատեգորիայի համար Թույլատրելի ծախսի ֆինանսավորվող ծախսի տոկոսը:

Կատեգորիա	Հատկացված Փոխառության Ա մասնաբաժնի (IDA 55050-AM) գումարը (ՀՓԻ-ով)	Հատկացված Փոխառության Բ մասնաբաժնի (IDA 55040-AM) գումարը (ՀՓԻ-ով)	Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսը (հարկերը ներառված)
1) Ծրագրի ներքո ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, վերապատրաստում և լրացուցիչ գործառնական ծախսեր (բացառությամբ Ծրագրի Ի.բ և II.ա մասերի):	450,000	930,000	75%
2) Ծրագրի Ի.բ և II.ա մասերի համաձայն՝ Համայնքային հիմնադրամի ֆինանսավորում և Նպատակային ենթածրագրերի դրամաշնորհներ:	1,050,000	2,170,000	100% համաձայնեցված գումարների
3) Չբաշխված	960,000	700,000	
ԸՆԴԱՄԵՆԸ	2,460,000	3,800,000	

Բ. Մասհանման պայմանները, Մասհանման ժամանակահատվածը

Անկախ սույն բաժնի Ա մասից՝ սույն Համաձայնագրի ստորագրման օրվան նախորդող ժամանակահատվածում վճարման նպատակով մասհանումներ չեն կատարվում:

2. Ավարտի ժամկետն է 2020 թ. մայիսի 31-ը:

ԱՌԴԻՐ3
Մարման Ժամանակացույց

Վճարման ամսաթիվ	**Վճարման ենթակա Փոխառության հիմնական գումարի (Փոխառության Ա մասնաբաժին – IDA 55050 և Փոխառության Բ մասնաբաժին – IDA 55040) (տոկոսային արտահայտությամբ)***
Յուրաքանչյուր փետրվարի 1 և օգոստոսի 1:	
Սկսած 2019 թ. օգոստոսի 1-ից մինչև 2029 թ. փետրվարի 1-ը ներառյալ:	**1.65%**
Սկսած 2029 թ. օգոստոսի 1-ից մինչև 2039 թ. փետրվարի 1-ը ներառյալ:	**3.35%**

*Տոկոսները ցույց են տալիս մարման ենթակա Վարկի հիմնական գումարի տոկոսային մասը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերակցությունը կարող է այլ բան սահմանել՝ Ընդհանուր պայմանների 3.03-րդ բաժնի *բ)* կետի համաձայն:

ՀԱՎԵԼՎԱԾ

Բաժին I. Սահմանումներ

1. «Ագրոքիմիական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ Ստացողի ոչ առևտրային կազմակերպություն, որը ՀՀ գյուղնախարարության վերահսկողության ներքո տրամադրում է ագրոքիմիական ծառայություններ:

2. «Հակակոռուպցիոն ուղեցույցներ»՝ 2011 թվականի հունվարին լրամշակված՝ 2006 թվականի հոկտեմբերի 15-ի՝ «ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի ու դրամաշնորհների միջոցով ֆինանսավորվող ծրագրերում զեղծարարության և կոռուպցիայի կանխարգելման ու պայքարի՝ Համաշխարհային բանկի ուղեցույցներ»:

3. «ԾԻԳ»՝ Ծրագրի գործողությունների ընդհանուր համակարգման, կազմման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման համար պատասխանատու՝ Ստացողի Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ՝ ըստ սույն Համաձայնագրի 2-րդ Առդիրի I բաժնի Ա.1 կետի:

4. «Շահառու»՝ անհատներ կամ խմբեր, որոնք շահում են Համայնքային հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացվող գործողությունների արդյունքում, կամ՝ անհատներ կամ խմբեր, որոնք շահում են Նպատակային ենթածրագրերի դրամաշնորհներից, և՝ «Շահառուներ»՝ միասին, մեկից ավելի Շահառու:

5. «Կատեգորիա»՝ սույն Համաձայնագրի 2-րդ Առդիրի IV բաժնի աղյուսակում սահմանված կատեգորիա:

6. «Համայնքների արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման հանձնաժողով» կամ «ՀԱԿԱԶՀ» նշանակում է՝ յուրաքանչյուր ընտրված համայնքում ստեղծված հանձնաժողով, որը պատասխանատու է ԱԿԶԱԾ-ների իրականացման համար:

7. «Համայնքային հիմնադրամ»՝ Ծրագրի I մասի *բ* կետով նախատեսված գործողությունների իրականացման համար Վարկի հասույթից հատկացվող միջոցներ, ըստ Ծրագրի գործառնական ձեռնարկում սահմանված իրավասության չափանիշների, սկզբունքների և ընթացակարգերի և իրականացման նախապատրաստությունների:

8. «Համայնքային հիմնադրամի ենթածրագիր»՝ Ծրագրի I մասի *բ* կետի համաձայն ֆինանսավորվող հաստատված ԱԿԱԶԾ-ների ներքո գործողությունների շարք:

9. «Խորհրդատուի ուղեցույցներ»՝ 2011 թվականի հունվար ամսվա հրատարակության՝ «ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի ու դրամաշնորհների միջոցով խորհրդատուների ընտրության և աշխատանքային պայմանագրի կնքման՝ Համաշխարհային բանկի Ստացողների ուղեցույցներ»:

10. «Բնապահպանական կառավարման ծրագիր» և «ԲԿԾ»՝ ԲՍԿՇՓ և սույն Համաձայնագրի 2 Առդիրի I.ե բաժնի համաձայն կազմվող և իրականացվող՝ համապատասխան Ենթածրագրերի բնապահպանական կառավարման ծրագիր, «ԲԿԾ»-ներ՝ միասին, մեկից ավելի ԲԿԾ:

11. «Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ» և «ԲՍԿՇՓ»՝ յուրաքանչյուրը նշանակում են՝ Ստացողի շրջանակային փաստաթուղթ՝ «Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ», որը հրատարակվել է Ստացողի տարածքում 2014 թ. մարտի 14-ին և վերահրապարակվել է 2014 թ. մարտի 26-ին և՝ Ընկերակցության *Infoshop* համակարգով 2014 թ. մարտի 26-ին, մանրամասնելով՝ ա) Ծրագրի իրականացման ընթացքում և գործարկման ընթացքում վնասակար բնապահպանական և սոցիալական ազդեցությունը վերացնելու կամ փոխհատուցելու կամ ընդունելի մակարդակին հասցնելուն ուղղված միջոցառումները, և բ) այդ միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ գործողությունները՝ ներառյալ մշտադիտարկումը և ինստիտուցիոնալ ուժեղացումը:

12. «Ընդհանուր պայմաններ»՝ սույն Հավելվածի II-րդ բաժնում սահմանված փոփոխություններով 2011 թվականի հունվար ամսվա հրատարակության՝ «Միջազգային զարգացման ընկերակցության վարկերի և դրամաշնորհների ընդհանուր պայմաններ»:

13. Դրամաշնորհ(ներ)՝ սույն Համաձայնագրի 1-ին Առդիրում նշված՝ Ծրագրի II.ա բաժնի ներքո ֆինանսավորում՝ սույն Ծրագրի Ի.Դ բաժնին և Ծրագրի ղեկավար ձեռնարկին համապատասխան ընտրված և հաստատված Նպատակային ենթածրագրերի համար:

14. «Դրամաշնորհի համաձայնագիր»՝ Նպատակային ենթածրագրի Ստացողի և Շահառուի միջև ստորագրված յուրաքանչյուր համաձայնագիր, որի համաձայն Ստացողն Դրամաշնորհ է հատկացնում այդ Շահառուին:

15. «Հավելյալ գործառնական ծախսեր»՝ Ծրագրի իրականացման ընթացքում Ստացողի կամ ԾԻԳ-ի կողմից կրած ծախսեր (բացառությամբ խորհրդատուների ծառայությունների և ոչ խորհրդատվական ծառայությունների), որոնք բոլորը չէին առաջանա Ծրագրի բացակայության դեպքում, մասնավորապես՝ i) Ծրագրի կառավարման համար գնված կամ օգտագործված սարքավորումների և ավտոմեքենաների պահպանումն ու շահագործումը, ii) Ծրագրի նպատակների համար աշխատանքի ընդունված աշխատակազմին վճարված աշխատավարձերը և նրանց առողջության ապահովագրավճարների գծով ծախսերը, iii) գործուղման ու օրապահիկի ծախսերy, iv) սպառվող գրասենյակային ապրանքները, v) կապի, տպագրական և հրատարակչական ծախսերը, vi) գրավոր և բանավոր թարգմանությունների ծախսերը, vi) Ծրագրի աուդիտը և vii) գրասենյակի վարձակալությունը, սակայն բացառելով Ստացողի քաղծառայության աշխատողների աշխատավարձերը, որոնց բոլորի հիմքում Ընկերակցության համար ընդունելի տարեկան բյուջեներն են:

16. «Վարկային համաձայնագիր»՝ Հայաստանի Հանրապետության և Բանկի միջև Ծրագրի համար կնքված համաձայնագիր, որի ամսաթիվը նույնն է, ինչ այս Համաձայնագրինը, որը ժամանակ առ ժամանակ կարող է փոփոխվել: Ֆինանսական համաձայնագիրը ներառում է այն համալրող բոլոր հավելվածները, Առդիրները և համաձայնությունները:

17. «Գյուղատնտեսության նախարարություն»՝ Ստացողի գյուղատնտեսության նախարարություն կամ նրա իրավահաջորդ:

18. «Արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման ծրագրեր» կամ «ԱԿԱԶԾ»՝ ՀԱԿԱԶԿ-ների կողմից մշակված ծրագրեր՝ միտված արոտավայրերի կառավարման, անասնապահության և ենթակառուցվածքների բարելավմանը, որոնք ենթակա են ֆինանսավորման Ծրագրի Ի մասի *բ)* կետով սահմանված՝ Համայնքային հիմնադրամի ֆինանսավորման միջոցով:

19. «Արոտավայրեր օգտագործողների կոոպերատիվներ» կամ «ԱՕԿ»-ներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն «կոոպերատիվի» կարգավիճակ ստացած համայնքային խմբեր, որոնց համայնքի ֆերմերները/հողօգտագործողները փոխանցում են հողի/արոտավայրերի կառավարման գծով իրենց իրավունքներն ու պարտականությունները արտադրողականության բարձրացման նպատակով:

20. «Վնասատուների դեմ պայքարի ծրագիր» և «ՎՊԾ»՝ եթե պահանջվի, որտեղ սահմանված է Ծրագրի իրականացման ընթացքում վնասատուների դեմ պայքարի համալիր միջոցառումների կազմում ու իրականացում, որոնք, Ընկերակցության հետ նախապես համաձայնեցմամբ, այդ միջոցառումները կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել, ներառյալ ծրագրի ցանկացած Առդիր կամ Հավելված:

21. «Գնումների ուղեցույցներ»՝ 2011 թվականի հունվար ամսվա հրատարակության՝ «ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի ու դրամաշնորհների միջոցով ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների Համաշխարհային բանկի Ստացողների ուղեցույց»:

22. «Գնումների պլան»՝ Ստացողի գնումների պլանը Ծրագրի համար՝ թվագրված 2014 թ. մարտի 31-ին և նշված Գնումների ուղեցույցների 1,18-րդ կետում և Խորհրդատուների ուղեցույցների 1.25-րդ կետում, որը, վերոնշյալ կետերի պայմաններին համապատասխան, կարող է ժամանակ առ ժամանակ լրամշակվել:

23. «Ծրագրի գործառնական ձեռնարկ»՝ Ծրագրի գործառնական ձեռնարկ (ներառում է Համայնքային հիմնադրամի ֆինանսավորման և Նպատակային ենթածրագրերի դրամաշնորհների գործառնական ձեռնարկը), որը լրամշակվում և հաստատվում է սույն Համաձայնագրի 2-րդ Առդիրի Ի.Ա.2 բաժնի համաձայն:

24. «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն»՝ Ստացողի փակ բաժնետիրական ընկերություն, որը պատասխանատու է խորհրդատվական ծառայությունների տրամադրման և մարզային գյուղատնտեսական կենտրոնների և ֆերմերների վերապատրաստման համար:

25. «Վերաբնակեցման միջոցառումների ծրագիր» կամ «ՎՄԾ»՝ յուրաքանչյուրը նշանակում է՝ ՎՄԾ համաձայն և սույն Համաձայնագրի Ի Առդիրի Ի մասի *ե* բաժնի դրույթներին համապատասխան կազմվող և իրականացվող՝ վերաբնակեցման միջոցառումների ծրագիր, և «ՎՄԾ»-ներ նշանակում է՝ մեկից ավելի նման ՎՄԾ:

26. «Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ» և «ՎՔՇ»՝ յուրաքանչյուրը նշանակում է՝ Ստացողի շրջանակային փաստաթուղթ՝ «Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ», որը հրատարակվել է Ստացողի տարածքում 2014 թ. մարտի 14-ին, վերահրապարակվել է 2014 թ. մարտի 26-ին և Ընկերակցության *Infoshop* համակարգով՝ 2014 թ. մարտի 26-ին, ընդգրկելով Ծրագրի ազդեցության

տակ հայտնված մարդկանց փոխհատուցման, վերականգնման և վերաբնակեցման ապահովման ուղեցույցները, ընթացակարգերը, Առդիրները և այլ մասնագրերը:

27. «Երաշխիքային փաստաթղթեր»՝ ցանկացած ԲԿԾ, ՎՄԾ կամ Երաշխիքային շրջանակի ներքո պահանջվող՝ որևէ այլ լրացուցիչ՝ սոցիալական կամ բնապահպանական երաշխիքների փաստաթուղթ:

28. «Երաշխիքների շրջանակներ»՝ հավաքական նշանակում է՝ ԲՍԿՇՓ, ՎՊԾ և ՎՔՇ:

29. «Երաշխիքների գործիքներ»՝ հավաքական նշանակում է՝ Երաշխիքների շրջանակներ և Երաշխիքների փաստաթղթեր:

30. «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն»՝ Ստացողի ոչ առևտրային կազմակերպություն, որը պատասխանատու է ծառայությունների տրամադրման համար, ներառյալ մշակաբույսերի ընտրության, սերմերի մշակման, աճեցման մեթոդները և այլն:

31. «Ենթածրագիր»՝ i) սույն Ծրագրի I.բ մասի համաձայն՝ սույն Ծրագրի I.բ կետի ներքո ԾԻԳ-ի կողմից իրականացվելիք գործողությունների շարք կամ ii) սույն Ծրագրի II.ա մասի համաձայն՝ Շահառուի կողմից իրականացվելիք հատուկ զարգացման ծրագիր, և «Ենթածրագրեր»՝ միասին՝ մեկից ավելի Ենթածրագիր:

32. «Նպատակային ենթածրագիր»՝ Ծրագրի II մասի *ա* կետի համաձայն իրականացվելիք առանձին զարգացման ծրագիր:

33. «Նպատակային ենթածրագրի դրամաշնորհ»՝ սույն Ծրագրի II.ա մասի համաձայն՝ Ֆինանսավորման հասույթից ընտրված Շահառուներին Ծրագրի գործառնական ձեռնարկում սահմանված իրավասության չափանիշներին, ընթացակարգերին և իրականացման նախապատրաստություններին համապատասխան հատկացվող դրամական միջոցներ:

34. «Վերապատրաստում»՝ Ծրագրի իրականացման ընթացքում Ստացողի կամ ԾԻԳ-ի կողմից կատարված ծախսեր ուսուցողական այցերի, վերապատրաստման դասընթացների, սեմինարների, աշխատաժողովների և Ծրագրի ներքո այլ վերապատրաստման հետ առնչվող գործողությունների գծով, այդ թվում՝ մասնակիցների, վերապատրաստողների և վերապատրաստվողների ճանապարհածախսի և օրապահիկի, վերապատրաստողների վարձատրության, վերապատրաստման հարմարությունների համար վարձավճարի, վերապատրաստման նյութերի պատրաստման և բազմացման, վերապատ-րաստման գործողությունների նախապատրաստումից և իրականացումից բխող այլ գործողությունների, ինչպես նաև Ընկերակցության հետ համաձայնեցված այլ ծախսերի, որոնց բոլորի հիմքում Ընկերակցության համար ընդունելի տարեկան բյուջեներն են:

<u>Բաժին II. Ընդհանուր պայմանների փոփոխություններ</u>

Ընդհանուր պայմանների փոփոխությունները հետևյալն են.

1. 3.02-րդ բաժինը փոխվել է հետևյալ ձևով.

«Բաժին 3.02. *Սպասարկման վճար և տոկոսավճար*

ա) Սպասարկման վճար: Ստացողն Ընկերակցությանն է վճարում Վարկի մասհանված մնացորդի սպասարկման վճար Ֆինանսավորման համաձայնագրում նշված դրույքաչափով: Սպասարկման վճարը հաշվեգրվում է Վարկի գումարների մասհանման համապատասխան օրերից և վճարվում է ապառք դիմաց, կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր մարման օր: Սպասարկման վճարը հաշվարկվում է մեկ տարին՝ 360 օր և տասներկու ամիս, մեկ ամիսը՝ 30 օր սկզբունքով:

բ) Տոկոսավճար: Ստացողն Ընկերակցությանն է վճարում Վարկի մասհանված մնացորդի դիմաց տոկոս Ֆինանսավորման համաձայնագրում նշված դրույքաչափով: Տոկոսավճարը հաշվեգրվում է Վարկի գումարների մասհանման համապատասխան օրերից և վճարվում է ապառքի դիմաց, կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր մարման օր: Տոկոսավճարը հաշվարկվում է մեկ տարին՝ 360 օր և տասներկու ամիս, մեկ ամիսը՝ 30 օր սկզբունքով:»:

2. Հավելվածի 16-րդ կետը (Փոխառության հաշիվ) փոփոխվել է հետևյալ ձևով.

«Փոխառության հաշիվ» նշանակում է՝ Ընկերակցության կողմից Ստացողի անունով բացված հաշիվներ, որոնցից յուրաքանչյուրում համապատասխանաբար հաշվեգրվում են Ֆինանսական համաձայնագրում սահմանված Փոխառության մասնաբաժինները:

3. Հավելվածի 28-րդ կետում (Ֆինանսավորման վճար) «Սպասարկման վճար» և «Պարտավորության վճար» բառերի միջև ավելացվել է «Տոկոսավճար» բառը:

4. Հավելվածում ավելացվել է նոր՝ 32-րդ կետ՝ «Տոկոսավճար»-ի հետևյալ սահմանմամբ, և, համապատասխանաբա,ր վերահամարակալվել են մյուս կետերը:

   «32. *Տոկոսավճար*՝ 3.02-րդ բաժնի *բ* կետի նպատակների համար Ֆինանսական համաձայնագրում սահմանված տոկոսավճար»:

5. Հավելվածի վերահամարակալված 37-րդ կետում (Վճարման օր), (նախկին 36-րդ կետում) «Սպասարկման վճար» և «Պարտավորության վճար» բառերի միջև ավելացվել է «Տոկոսավճար» բառը:

6. Հավելվածի վերահամարակալված 50-րդ կետում (Սպասարկման վճար), (նախկին 49-րդ կետում) հղումը 3.02-րդ բաժնին փոխարինվել է 3.02-րդ բաժնի *ա* կետին հղումով: